



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 9 ԱՊՐԻԼ, 2018

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՈՒՐ Ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՐՄՈՍ 51

ՆԵՐՈՒՄԻ ԽՆԴՐԱՆՔ

Ողորմէ ինձի, ով Աստուած, դուն՝ որ այնքան ողորմած ես.
քու անսահման գթութեամբդ իմ յանցանքս ներէ ինձի:
Ամբողջութեամբ մաքրէ վիս իմ անօրէնութենէս. եւ իմ մեղքես վիս սրբէ:
Գիտեմ, յանցանք գործեցի, մեղքս բնաւ միտքես չ'ելլեր:
Քեզի, միայն քեզի դէմ մեղանչեցի, Տէր,
գործեցի այն՝ ինչ որ դուն չարիք կը նկատես:
Ուստի ներումիդ ցօղով սրբէ վիս, եւ պիտի մաքրուիմ,
լուա վիս, եւ ձիւնէն աւելի մաքուր պիտի ըլլամ:
Ցնծութիւնն ու ուրախութիւնը վերադարձուր ինձի,
եւ տառապած ոսկորներս պիտի ցնծան:
Նկատի մի՛ առներ մեղքերս, ներէ բոլոր յանցանքներս:
Մաքուր սիրտ մը հաստատէ մէջս, ո՛վ Աստուած,
նոր եւ ուղիղ հոգի դիր իմ ներսիդիս:
Ներկայութենէդ մի՛ վրկեր վիս, Տէր, եւ քու Սուրբ Հոգիդ թող չլքէ վիս:
Փրկութեանդ ցնծութիւնը ԿՈՒՐ Ինձի՛
եւ քու կամքիդ հնազանդ հոգի մը դիր իմ մէջս:
Որպէսպի անօրէններուն սորվեցնեմ քու կամքդ,
եւ մեղաւորները քեզի դառնան:
Բաց իմ շրթներս, ո՛վ Տէր, թող բերանս քեզի օրհնութիւն երգէ:
Եթէ զոհ կամենայիր՝ պիտի մատուցանէի, բայց ողջակէզ դուն չես ուկեր:
Ուկած զոհդ զղջումով լի հոգի մըն է, ո՛վ Աստուած,
հետեւաբար մի՛ մերժեր զղջումնալից եւ ընկճուած իմ սիրտս:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՐԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենատար Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ
ԳԼՈՒԽ 1:5-10

ԱՍՏՈՒԱԾ ԼՈՅՍ Է, ԼՈՅՍԻ ՄԷՋ ԶԱԼԵՆՔ (1:5-10)

Պարահական չէ, որ Առաքեալները, եւ այս պարագային Յովհաննէս Առաքեալ կարեւորութեամբ կը շեշտեն Քրիստոսի մարդեղութիւնը, Անոր ասպրուածութիւնը, որովհետեւ եւ իրենց ժամանակակից, եւ այսօր այնպիսի մոլորեցուցիչ եւ ճշմարտութիւնը խեղաթիրող երեւոյթներ կան, որ կը փորձեն մեզ ճշմարտութենէն հեռացնել: Ահա թէ ինչու, Առաքեալը կ'ըսէ, «կը գրենք ձեզի այս նամակը, որպէսզի հաղորդակից դառնաք Հօրը եւ Որդիին հետ, եւ մեր ուրախութիւնը կապարեալ ըլլայ», այսինքն՝ մեղաւորի մը դարձը ու անոր փրկութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ կապարեալ ուրախութիւն:

Յովհաննէս Առաքեալ շարունակելով, առաջին իսկ արտայայտութեամբ, կ'ըսէ. «**պարգամը, որ լսեցինք ձեզի կը փոխանցենք**» (5 հմբ): Ինչ է այդ պարգամին բովանդակութիւնը. «**Աստուած լոյս է, բնաւ խաւար չկայ անոր մէջ**» (5 հմբ): Այն պարգամները, որ Առաքեալները, ինչպէս նաեւ Յովհաննէս Առաքեալ ինք որ կը փոխանցեն աղբիւրը Քրիստոս Ինք է, ուրիշ ոչ որ: «**Ինչ որ իրմէ լսեցինք եւ ձեզի կը փոխանցենք**», «**ինչ որ ստրվեցուցի, ստրվեցուցեք**» (Մտք 28:19-20): Ուրեմն, Աւերարանի բարի լուրը մարդկային մտքի արտադրութիւն չէ, այլ՝ Աստուածային նախաձեռնութիւն: Սա կը նշանակէ, թէ Քրիստոս պարգապէս իրաւունքը կամ արտօնութիւնը չտուաւ իր աշակերպներուն, ըսելով զացէք ինչ որ կ'ուզէք քարոզեցէք, այլ՝ «**Ինչ որ Ես ձեզի ստրվեցուցի, ստրվեցուցեք**»: Առանց աւելորդաբանութեան, կամ պակաս բան մը ներկայացնելու: Անոր համար ալ, լսելու մէջ պարտականութիւնն ու պարտաւորութիւնը ունի լսողը, փոխացելու ինչ որ լսեց: Այդ իսկ էր պարճաբը, որ Քրիստոս թելադրեց Իր աշակերպներուն ըսելով. «**Երուսաղէմէն մի՛ հեռանաք, սպասեցէք՝ մինչեւ սրանաք Հօրը խոստումը, որուն մասին խօսեցայ ձեզի**» (Գործք 1:5), այսինքն՝ Սուրբ Հոգիին գալուստը, յետոյ երթալու եւ վկայութիւններ փալու: Պարգամին աղբիւրը Քրիստոս Ինք է, իսկ պարգամին բովանդակութիւնը՝ Աստուած լոյս է, բնաւ խաւար չկայ Անոր մէջ: Ինչո՞ւ այս հաստատումը: Որովհետեւ այնպիսի արտայայտութիւններ կան, ու կը լսենք երբ Աստուծոյ մասին կը խօսինք: Բայց ահա Առաքեալը կու գայ եւ յստակօրէն կը ներկայացնէ ըսելով. «**Աստուած լոյս է, բնաւ խաւար չկայ Անոր մէջ**»: Ուրեմն, ո՞ր Աստուծոյ մասին կը խօսինք երբ այսպիսի նիւթի մը ըլլայ խօսելիք: Յովհաննէս Առաքեալ երբ կը խօսի խաւարի մասին նկարի ունի, որպէս Չարը, սուրը, սխալը: Կը նշանակէ Աստուած լոյս է եւ այս բոլորը բաները Անոր մէջ չկան: Այնպէս ինչպէս ամբողջ բնութիւնը լոյսի կարիքը ունի, նոյնպէս ալ հոգեւոր կեանքին մէջ, լոյսի անհրաժեշտութիւնը, եւ այս պարագային՝ Աստուած Ինք ճշմարիտ լոյսը, որ աղբիւր է՝ իմաստութեան, սրբութեան, գեղեցկութեան, ուրախութեան, մաքրութեան: Որքան ալ զօրաւոր ըլլան մեր աչքերը, սակայն առանց լոյսի կարելի չէ փեսնել ու վայելել բնութիւնն ու անոր գեղեցկութիւնը, նոյնպէս ալ հոգեւոր կեանքին մէջ լոյսին անհրաժեշտութիւնը փեսնելու եւ վայելելու Աստուծոյ փառքն ու գեղեցկութիւնը: Բնաւ խաւար չկայ Անոր մէջ: Նոյնիսկ բիծ մը իսկ չկայ Անոր մէջ: Յովհաննէս այս բոլորը ոչ թէ միայն լսեց, այլ՝ փեսաւ նոյնինքն Յիսուս Քրիստոսի մէջ, որովհետեւ Ինք է Բանը, որ մարմնացաւ եւ Առաքեալները Անոր փառքը փեսան:

Յովհաննէս Առաքեալ շարունակելով միտքը, կ'ըսէ, թէ Քրիստոնեայ հաւարացեալը կոչուած է հաղորդակից ըլլալու Քրիստոսի հետ, այլ խօսքով քալելու Լոյսի մէջ, ըլլալու Լոյսին հետ, բայց զգոյշ ըլլալու, որ միւս կողմէ չշարունակենք սարիլ ու քալել խաւարի մէջ, այսինքն՝ մեղքի մէջ, Չարին հետ, սրութեան մէջ: Լոյսի մէջ քալել կը նշանակէ ունենալ ասպրուածային ինքնութեան նմանութիւնը: Ահա այն արեւն է որ հաղորդակից կ'ըլլանք եւ իրարու եւ Աստուծոյ հետ, եւ Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ կը սրբէ ամէն մեղքէ: Այս երեւոյթը ամենօրեայ երեւոյթ է, մաքրութեան, որովհետեւ փակաւին մեղանշական բնութիւնը մեզի հետ ունինք (6-7 հմբ): Քրիստոս Ինք ճշմարիտ լոյսը, ոչ միայն մեր փեսողութիւնը կը յստակեցնէ, այլ նաեւ մեր արարքները կը ճշդէ: Քրիստոս պիտի ըսէ. «**Ես եմ աշխարհի լոյսը: Ով որ ինձի կը հետեւի՝ խաւարի մէջ պիտի չքալէ, այլ պիտի ունենայ այն լոյսը որ կեանքին կ'առաջնորդէ**» (Յովհ 8:12):

Առաքեալը ցոյց կու փայ, խոստովանութեան անհրաժեշտութիւնն ու օգտակարութիւնը: Խոստովանութիւնը նաեւ կու փայ առիթը լոյսին մէջ ըլլալու եւ լոյսին հետ քալելու: Առաքեալը կը յստակեցնէ, թէ ունինք մղանշական բնութիւն, Քրիստոս մեզ մաքրեց, բայց փակաւին ունինք այդ մեղանշական վիճակը, որ մեզմէ կը սպասուի ամենօրեայ խոստովանութեան պարտաւորութիւնը,

որուն դիմաց «Աստուած, որ արդար է, պիտի ներէ մեր մեղքերը եւ մեզ պիտի սրբէ մեր բոլոր անիրաւութիւններէն» (8-9 հմր): Այս բացատրութիւնները կու տայ Առաքեալը անոնց համար, որոնք այսպիսի արտայայտութիւններ ունէին եւ իրենք զիրենք այդպէս կը ներկայացնէին. «Հաղորդակից ենք իրեն»», բայց կը շարունակենք խաւարի մէջ ապրիլ, կը սպենք եւ ճշմարտութիւնը չենք գործադրեր (6 հմր): «Մեղք չունինք ըսենք», մենք մեզ կը խաբենք եւ մեր մէջ ճշմարտութիւն չկայ (8 հմր): «Մեղք չգործեցինք» ըսենք, ստախոս կը հանենք զԱստուած, եւ մեր մէջ իր խօսքը չկայ (10 հմր):

Բաւարար չէ, պարզապէս շրթներով հաւատամք ունենալ, եթէ երբեք մեր ապրելակերպը նմանօրինակը պիտի չըլլայ մեր հաւատամքին: Բացասականէն կ'անցնի դրականին: «Եթէ լոյսի մէջ քալենք, այն ատեն ճշմարտապէս հաղորդակից կ'ըլլանք իրարու, եւ Իր Որդւոյն Յիսուսի արիւնը կը սրբէ մեզ ամէն մեղքէ» (7 հմր):

Առաքեալը նաեւ կը զգուշացնէ այն երեւոյթէն, որ յաճախ անով մենք զմեզ կը խաբենք, երբ կ'ըսենք «Մեղք չունինք»: Բայց երբ Լոյսին ներկայութեան կու գանք, ամէն ինչ կը բացայայտէ, բայց չի յուսահատեցնէր, որովհետեւ, Առաքեալը յաջորդ նախադասութեան մէջ կ'ըսէ, «Եթէ խոստովանինք մեր մեղքերը, վստահ եղէք՝ թէ Աստուած արդար է, պիտի ներէ մեր մեղքերէ եւ մեզ պիտի սրբէ մեր բոլոր անիրաւութիւններէն» (9 հմր):

Մէկ այլ ուրիշ զգուշացումը, այս անգամ եթէ ըսենք «Մեղք չգործեցինք»: Այնքան ատեն որ տակաւին կ'ապրինք, մեղք կրնանք գործել: Մեղք չենք գործեր երբ կը հասնի պահը հանդիպելու Քրիստոսի: Բայց միւս կողմէ, նաեւ Առաքեալը կը զգուշացնէ, թէ որքանով լուրջի պէտք է առնել մեղք հասկացողութիւնը: Աստուած երբեք պիտի չուզէ, որ մենք մեղք գործենք, այլ՝ Լոյսի մէջ քալենք: Իսկ եթէ մեղք գործեցինք, որ կրնանք, հաւանականութիւնը կայ մեղք գործելու, որովհետեւ այնքան ատեն որ կ'ապրինք այս մարմնին մէջ, այն ատեն, Յովհաննէս Առաքեալ կ'ըսէ. «Հօրը քով բարեխօս ունինք միակ Արդարը՝ Յիսուս Քրիստոսը» (2:1): Կը նշանակէ, նախ, միակ Արդար Յիսուս Քրիստոս Ինք է, միւս բոլոր արարածները արդար չեն, ու չեն կրնար իրենք զիրենք արդարացնել: Առաքեալը կու գայ եւ կը վստահեցնէ, որ մենք ունինք միակ բարեխօսը Յիսուս Քրիստոսը, որ ուրիշ բան չըսեր եթէ ոչ «Հայր, ներէ իրենց մեղքը», ինչո՞վ ներէ, եթէ ոչ նոյն այն արիւնով որ թափեց խաչին վրայ:

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ ին հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ բազմամեղիս:*